

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/52»**

ք. Երևան

« 18 » հուլիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ՀԻԼՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եղիազարյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի բակային տարածքների վերանորոգման անաշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և **կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում է՝ մինչև 2019թ հոկտեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,



դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **34628400 (երեսունչորս միլիոն վեց հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 5771400 (հինգ միլիոն յոթ հարյուր յոթանասունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012213709
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



Կապալառու

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայթիզնետքանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014351360100
ՀՎՀՀ 04421922

Հ. Եղիազարյան

(ստորագրություն)



Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ - Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ *

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սայաթ-Նովա 21-21Ա Աբովյան 26Բ շենքերի բակային տարածքների վերանորոգման աշխատանքներ

NN	Քիմավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5		
		<u>Շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա	տն	1.2400	0.8420	1.0441
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	1.2400	2.1110	2.6176
3	E46-99	Բետոնե հարթակների քանդում	մ ³	4.5800	12.3690	56.6500
4	E27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ	285.8000	0.6280	179.4824
5	E46-109	Բետոնե ձևավոր սալերի քանդում	մ ²	6.2000	0.3170	1.9654
6	E46-109	Բազալտե սալերի քանդում	մ ²	1.5000	0.3170	0.4755
7	P9-26 կիր.	Մետաղական ցանկապատերի, ճաղաշարերի ապամոնտաժում	զմ	34.5000	0.3380	11.6610
8	C310-1 տ.մ.կ 29	Առկա զրուցարանների ապամոնտաժում	հատ	2.0000	4.5310	9.0620
9	C310-2 տ.մ.կ 29	Նստարանների ապամոնտաժում	հատ	1.0000	1.1290	1.1290

10	E22-64K=0.6	Ոռոգման մետաղական խողովակների ապամոնտաժում	զմ	45.0000	0.1910	8.5950
11	E48-253 վիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած բլերից	հատ	60.0000	0.0430	2.5800
12	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ ³	23.7000	1.5700	37.2090
13	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	83.7000	2.6670	223.2279
Կառուցողական աշխատանքներ						
<u>Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ ³	3.3040	6.8910	22.7679
2	E27-82-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	188.8000	7.4030	1397.6864
<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	1.5950	6.8910	10.9911
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	զմ	212.7000	3.1290	665.5383
<u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	4.6350	6.8800	31.8888
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով	մ ³	3.7080	13.2590	49.1644
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով 6սմ հաստությամբ	մ ²	92.7000	4.2010	389.4327
<u>Բետոնե հենապատի կառուցում</u>						
1	E15-70 K=0.5	Հենապատի բազալտե թասակների ապամոնտաժում՝ պահեստավորմամբ հետագա օգտագործման համար	մ ²	46.5200	7.7750	361.6930
2	E46-99	Բետոնե շերտի քանդում	մ ³	5.1000	12.3690	63.0819
3	E46-79	Հենապատի տուֆե շարվածքով հատվածների քանդում	մ ³	0.2800	9.2180	2.5810
4	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	10.1100	2.6820	27.1150
5	E8-507	Հենապատի շարվածքի իրականացում բազալտե քարերով	մ ²	16.9500	13.2380	224.3841
6	E8-507	Հենապատի շարվածքի լրացում բացակայող հատվածներում՝ բազալտե քարերով /ճույն շարվածքով/	մ ²	10.3400	13.2380	136.8809
7	E6-90	Ետնամասի բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	3.5800	38.2920	137.0854
8	E6-90	Բետոնի շերտի իրականացում	մ ³	3.8100	38.2920	145.8925

9	շուկա	Գոյություն ունեցող բազալտե թասակների հղկում	մ ²	41.8700	4.5070	188.7081
10	E15-70 կիր.	Բազալտե թասակների վերատեղադրում	մ ²	41.8700	16.4680	689.5152
11	E15-70	Նոր բազալտե թասակների տեղադրում, b=150մմ	մ ²	4.6500	39.0160	181.4244
		Աստիճանների երեսպատում բազալտե սալերով				
1	E15-77	Առկա աստիճանների երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ.	մ ²	4.4100	11.3410	50.0138
		Առկա փայտե մատարանի վերանորոգում				
1	E10-28	Վասված փայտե մատատեղերի փոխարինում չորսուներով	մ ³	0.0300	177.0060	5.3102
2	P5-40 կիր.	Փայտե մասերի հղկում	մ ²	2.8520	0.4050	1.1551
3	E15-608	Նույնի երկտակ լաքապատում	մ ²	2.8520	0.4940	1.4089
		Այլ աշխատանքներ				
1	E15-77	Ցայտադրյուրի հարթակի երեսպատում բազալտե սալերով	մ ²	1.5000	12.5960	18.8940
2	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաչարի իրականացում	գմ	205.5000	7.2140	1482.4770
3	Գնահաշվարկ N2	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	12.0000	9.4300	113.1600
4	Գնահաշվարկ N3	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	12.0000	32.2340	386.8080
5	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ ³	3.3000	2.2100	7.2930
6	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	195.4210	195.4210
7	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «Չորիզոնական ճոճմանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	46.7000	46.7000
8	Գնահաշվարկ N12	Նոր մանկական խաղասարք «ճոճմանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	85.9050	85.9050
9	Գնահաշվարկ N11	Նոր մետաղական զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում 3x4մ չափերով, սեղանով, մատարաններով	հատ	1.0000	411.0900	411.0900
10	E27-42 E27-42-1	Խճի մախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	մ ²	274.9000	0.6350	174.5615
11	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ. /300x150մմ չափերով եզրաքարերի երկայնքով՝ 0.5մ լայնությամբ/+180.5քմ /ըստ մախագծի/	մ ²	274.9000	2.4660	677.9034
12	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ ³	57.4800	0.3960	22.7621
13	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	86.2200	5.6050	483.2631
14	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ	մ ²	574.8000	1.3620	782.8776

15	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ ²	574.8000	0.1280	73.5744
16	E48-214	Սերմի ցանում 1մ ² - 35գր	մ ²	574.8000	0.2060	118.4088
		Էլեկտրատեխնիկական մաս				
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ ³	24.4500	2.7700	67.7265
2	8-142-1	Ամկողմակի պատրաստում	գմ	71.9000	0.2000	14.3800
3	E23-1	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.16+2.16մ ³ /	մ ³	4.3200	3.0850	13.3272
4	8-417-7	Խողովակ վինիլաստե Ø50մմ	գմ	71.9000	0.4470	32.1393
5	E8-145-1	ԱՎԱԿ 4x16մմ ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	71.9000	0.6520	46.8788
6	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	71.9000	0.2160	15.5304
7	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	18.6900	0.8020	14.9894
8	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	10.3700	2.6820	27.8123
9	Գնահաշվարկ N7	Լուսավորության հենասյուների տեղադրում H=6.1մ	հատ	3.0000	120.9120	362.7360
10	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ, կամ համարժեք	հատ	3.0000	11.6230	34.8690
		Ոռոգում				
		Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	2.0000	2.3440	4.6880
2	E22-65	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրատեռակցվող խողովակներից Ø76x3.5մմ, ինդրավիկ փորձարկումով	գմ	170.0000	2.8520	484.8400
2	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրատեռակցվող խողովակներից Ø48x3.0մմ, ինդրավիկ փորձարկումով	գմ	40.0000	1.6000	64.0000
4	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 30x 66p Ø50մմ Py1.0ՄՊա	հատ	3.0000	12.6530	37.9590
5	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում Ø50	հատ	6.0000	2.4320	14.5920
6	Գնահաշվարկ N8	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	13.0000	5.9900	77.8700
7	շուկա	Ջրցան ցնցուղ	հատ	13.0000	4.4120	57.3560
8	Գնահաշվարկ N9	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	3.0000	4.7010	14.1030
9	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.0320	1904.5070	60.9442

10	շուկա	Ջեոյուս M16, L=60մմ	կգ	3.5280	0.9800	3.4574
11	շուկա	Պնդօղակ M16	կգ	1.0080	1.0290	1.0372
12	E15-614	Պողպատե խողովակների մերկում 2 շերտ	մ ²	46.7000	0.8360	39.0412
14	E22-335	Պողպատե խողովակների լվացում Φ48մմ	գմ	40.0000	0.0240	0.9600
15	E22-336	Պողպատե խողովակների լվացում Φ76մմ	գմ	170.0000	0.0260	4.4200
Շինարարական աշխատանքներ						
1	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 7.8քմ	մ ³	0.6240	3.0180	1.8832
2	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի բարձուն ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	1.1230	2.6670	2.9950
3	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով /խրամուղում/	մ ³	3.1200	1.5700	4.8984
4	E23-1	Ավազ /հիմնատակ և վերին պաշտպանիչ շերտ/	մ ³	0.7100	3.0850	2.1904
5	E1-969	Գրունտի ետլիցք ձեռքով	մ ³	2.4100	0.8020	1.9328
6	E1-1184	Գրունտի տուփանում	մ ³	2.4100	0.1678	0.4044
7	E27-43E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=12սմ	մ ²	7.8000	0.9530	7.4334
8	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ.	մ ²	7.8000	2.4860	19.3908
9	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 13կմ	տ	1.2780	2.1110	2.6979
Ընդամենը						11940.000
ԱԱՀ, 20%						2388.000
Ընդամենը						14328.000

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ - Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ *

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսրայելյան 37 շենքի բակային տարածքների վերանորոգման աշխատանքներ

NN	Քիմնակիրումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Միավոր	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5		
		<u>Շինարարական աշխատանքներ</u>				
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	E46-99	Բետոնե հարթակների քանդում	մ ³	0.7400	15.8920	11.7601
2	E27-36	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ	13.9500	0.8070	11.2577
3	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 92.9քմ	մ ³	7.4320	3.8770	28.8139
4	C310-1 տ.մ.կ 29	Առկա գրուցարանի ապամոնտաժում	հատ	1.0000	5.8210	5.8210
5	E46-99	Բետոնե աստիճանների քանդում	մ ³	1.3200	15.8920	20.9774
6	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ ³	14.3000	2.0180	28.8574
7	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	մ ²	93.0000	0.0530	4.9290
8	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	27.3200	3.4270	93.6256
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
		<u>Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u>				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ ³	0.5690	8.8530	5.0374
2	E27-82-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	32.5000	9.5120	309.1400
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u>				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	0.3800	8.8530	3.3641
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	զմ	50.7000	4.0200	203.8140
		<u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u>				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	2.4300	8.8400	21.4812
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ. չոր ց/ա շաղախով	մ ³	1.9440	17.0360	33.1180
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով 6սմ հաստությամբ	մ ²	48.6000	5.3970	262.2942
		<u>Հենապատի վնասված հատվածի վերանորոգում</u>				
1	E46-132 կիր.	Շարժվող բազալտե քուրբատաշ քարերի զգուշությամբ հանում, հետագա	մ ²	4.5000	3.7230	16.7535

		վերատեղադրմամբ				
2	E46-99	Քարերի ետնամասի բետոնի քանդում	մ ³	0.7000	15.8920	11.1244
3	E6-90	Բետոնացում B15 դասի բետոնով	մ ³	0.7500	49.1980	36.8985
4	E8-501	Շարվածքի իրականացում նախկինում ապամոնտաժված բազալտե քուրքատաշ քարերից	մ ²	3.5000	7.8000	27.3000
5	E8-501	Շարվածքի իրականացում նոր բազալտե քուրքատաշ քարերով /շուրք/	մ ²	1.5000	19.3470	29.0205
		Այլ աշխատանքներ				
2	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	14.5000	9.2680	134.3860
3	Գնահաշվարկ N2	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	5.0000	12.1160	60.5800
4	Գնահաշվարկ N3	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	5.0000	41.4150	207.0750
5	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ ³	2.7500	2.8390	7.8073
6	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	251.0790	251.0790
7	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «Չորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	60.0010	60.0010
8	Գնահաշվարկ N12	Նոր մանկական խաղասարք «ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	110.3720	110.3720
9	Գնահաշվարկ N11	Նոր մետաղական զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում 3x4մ չափերով, սեղանով, նստարաններով	հատ	1.0000	528.1740	528.1740
10	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	մ ²	16.2500	0.8160	13.2600
